ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2023**թ. փետրվարի 14-ին, ժամը՝ 12:00-ին**
Ք.ԵՐԵՎԱՆ, ՉԱՔԻՅԱՆ 10 ՀԱՍՑԵՈՒՄ, **հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2023թ. փետրվարի 13-ին, ժամը՝ 17:00-ին**

ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2022թ. դեկտեմբերի 15-**ի թիվ** 347-**Ա հրամանով օտարման ենթակա ՀՀ ոստիկանությանն ամրացված տրանսպորտային միջոցները**

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը	Գույքի (լոտի) գտնվելու վայրը	Գույքի (լոտի) վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ	Գույքի (լոտի) տեխնիկական վիճակը	Գույքի գնահատված արժեքը /ՀՀ դրամ/	Լոտի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը /ՀՀ դրամ/	Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/	Գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը /ՀՀ դրամ/
1	2	S/մ.՝ UAZ 31519	ք. Երևան, Բագրատունյանց նրբանցք	Թող. տարեթիվ՝ 1998թ., հ/հ՝ 079 II 14, ն/հ.՝ XTT315190W0032813, թափքը՝ ունիվերսալ	Վազքը՝ 76647կմ/ըստ ցուցիչի/: Շարժիչի վիճակը՝ չի գործարկվում, աշխատանքի ընթացքում ունեցել է ոչ ստանդարտ ձայնային տվյալներ, չի ունեցել յուղի ճնշում, յուղի և բենզինի ծախսերը գերազանցել են սահմանված նորմերը: Շարժիչը ենթակա է հիմնական նորոգման, փոխարինման ենթակա են կարբյուրատորը, էլեկտրաբաշխիչ համակարգը, կայծամոմի լարերը և կայծամոմերը: Պոմպից ունի արտահոսք: Փոխանցման տուփն աշխատանքի ընթացքում ունի ձայնային տվյալներ և չեն գործարկվում երրորդ և չորրորդ փոխանցումները: Միջանկյալ տուփը չի միանում, ունի յուղի արտահոսք: Չի աշխատում ձեռքի արգելակման համակարգը: Թափքի վիճակը՝ հատակը ամբողջովին պատված է ժանգի խորը հետքերով: Թափքը բազմակի անգամներ վերանորոգվել է եռակցման միջոցով, սակայն այլևս նպատակահարմար չէ կրկին նորոգման, քանի որ թափքի հենասարքին միացվող ձգման հատվածները ենթակա չեն եռակցման: Փոխարինման ենթակա են սրահի որոշակի դետալները և նստատեղերը: Չեն գործում արգելակման համակարգի գլխավոր և աշխատանքային խցուկները, արգելակման թմբուկներն ունեն մեխանիկական խորը մաշվածություն, ենթակա են փոխարինման: Կապարային մարտկոցը ժամկետանց է: Այլ հանգույցների և դետալների վիճակը/ ընթացային մաս, կամրջակներ և այլն/՝ կարդանային լիսեռների խաչուկները ենթակա են փոխարինման, ճոքաթիթեղների ռետինե միջուկները նույնպես փոխարինման ենթակա են: Ղեկային համակարգի գնդե հոդակապերի միջուկները մաշված են, մեքենան գրեթե անկառավարելի է, քանի որ ղեկային մեխանիզմի սահմանված ազատ շարժաբերը եռակի անգամ ավել է: Հովացման ռադիատորը ենթարկվել է բազմակի նորոգման և այլևս ենթակա չէ հետագա շահագործման: Էլեկտրալարերը ժամանակի ընթացքում կորցրել են էլեկտրամեկուսիչ ծածկույթի էլաստիկ հատկությունը: Ցուցիչները չեն աշխատում, հետևի կամրջակն ունի խփոցների ձայն: Բացակայող հանգույցներ և դետալներ՝ պահեստային անվադող: Այլ լրացուցիչ տեղեկություններ՝ մեքենան շահագործման տարիներին չի անցել հիմնական նորոգում, ենթարկվել է բազմակի ուղղակի ներկման առանց թիթեղյա մակերեսների խորը մշակման:	1 200 000	765 000	38 250	16 925	18 000

2	3	S/մ.՝ GAZ 53-12	ք. Երևան, Բագրատունյանց նրբանցք	Թող. տարեթիվ՝ 1988թ., հ/հ՝ 138 II 14, հենասարքի համարը՝ 1243739, թափքը՝ կողավոր	Վազքը՝ 49202կմ/ըստ ցուցիչի/: Շարժիչի վիճակը՝ կարիք ունի հիմնական վերանորոգման, առանձին հանգույցների և դետալների փոխարինման: Շարժիչի աշխատանքը անկանոն է, յուղի և բենզինի ծախսը գերազանցում է սահմանված նորմերը: Ջրահովացման համակարգը լիովին փոխարինման ենթակա (ռադիատոր, պոմպ, ռետինե խողովակներ): Փոխանցման տուփն աշխատում է խփոցներով, ձայնային տվյալների առկայությամբ փոխանցումները երբեմն չի միանում կամ չի պահպանվում: Թափքի վիճակը՝ փայտյա տախտակները փտած և կոտրված են, ենթակա են լիովին փոխարինման: Այլ հանգույցների և դետալների վիճակը/ ընթացային մաս, կամրջակներ և այլն/՝ էլեկտրալարերի հիմնական խուրցը կտրտված են և որակապես մաշված: Բացակայող հանգույցներ և դետալներ չկան: Այլ լրացուցիչ տեղեկություններ՝ շահագործման ընթացքում մեքենան չի անցել հիմնական նորոգում:	1 065 000	678 938	33 947	15 635	18 000
3	4	S/մ.՝ KAVZ 685	ք. Երևան, Բագրատունյանց նրբանցք	Թող. տարեթիվ՝ 1980թ., հ/հ՝ 141 II 14, հենասարքի համարը՝ 0388061, թափքը՝ վագոն	Վազքը՝ 05203կմ/ըստ ցուցիչի/: Շարժիչի վիճակը՝ անսարք, կարիք ունի հիմնական նորոգման: Շարժիչի գլխիկների միջադիրները փոխարինման ենթակա են, առկա են յուղի արտահոսքի հետքեր՝ 100կմ-ին յուղի ծախսը կազմում է 0.8-1լ: Տեղեկություն չունենք մխոցների, մխոցային օղակների և գլանների մաշվածության վերաբերյալ, քանի որ շարժիչը չի ենթարկվել ապամոնտաժմամբ արատավորման: Փոխարինման ենթակա են գրեթե բոլոր խտաբուկերը և միջադիրները, էլեկտրաբաշխիչ համակարգը (տրամլյոր), բենզամղիչը, վառելիքաբաշխիչը (կարբյուրատոր), հովացման համակարգի ռետինե խողովակները և ռադիատորը: Փոխանցման տուփի եռատամնանիվ լիսեռի ատամնանիվները կոտրված են: Առանցքակալներն ունեն տեսանելի մաշվածություն: Երկրորդական լիսեռին համակցված ատամնանիվները մաշված են, ենթակա են ամբողջովին փոխարինման: Թափքի վիճակը՝ վատ, թափքի հիմնական կանգնակները քայքայված են, ենթակա չեն եռակցմամբ վերանորոգման: Դիմացի ձախակողմյան դիմապակին կոտրվել է մեքենայի տանիքի ծանրությունից, քանի որ հենասյունը ենթարկվել է խորը կոռոզիայի: Թիթեղյա մակերեսներին առկա են օքսիդացման հետքեր, նպատակահարմար չէ հետագա նորոգման: Այլ հանգույցների և դետալների վիճակը/ ընթացային մաս, կամրջակներ և այլն/՝ դիմացի կամրջակի ձգաձողերը (շկվոռին) մաշված են, անվաբացվածքները ոչ ստանդարտ: Հետևի կամրջակն ունի ձայնային ոչ ստանդարտ տվյալներ: Էլեկտրական լարերը հիմնական փոխարինման ենթակա են, քանի որ կորցրել են էլեկտրամեկուսիչ ծածկույթի էլաստիկ հատկությունը: Բացակայող հանգույցներ և դետալներ՝ դիմապակի: Այլ լրացուցիչ տեղեկություններ՝ թողարկումից հետո ամբողջ շահագործման ընթացքում մեքենան չի անցել հիմնական նորոգում:	520 000	331 500	16 575	8 738	18 000

** Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝* ***«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):***

*** ***Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝ 17:00-ն) ներկայացրել է աճուրդի մասնակցության հայտ:***

** Յուրաքանչյուր հաջորդ լոտի աճուրդը սկսվում է նախորդ լոտի աճուրդն ավարտվելուց հետո:*

• Մասնակիցները վաճառվող լոտ(եր)ին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ Երևան քաղաքի Բագրատունյանց նրբանցք հասցեում, զանգահարելով 094-91-99-13 հեռախոսահամարով, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 9:00-18:00-ն:

Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:

Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը և պայմանները՝

** Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ* ***սեփականության իրավունք****, ինչպես նաև սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել* ***աճուրդի մասնակցության հայտ****՝ աճուրդի մասնակցության համար* ***անհրաժեշտ փաստաթղթերով****:*

Աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- ***<u>նախավճարի վճարումը</u>*** *հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար,* ***պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը****), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության* ***թիվ 900018002171****, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝* ***<u>աճուրդի նախավճար</u>***՝ *պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը:*

- ***<u>մասնակցության վճարումը</u>*** *հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար,* ***պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը),*** *մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության* ***թիվ 900018002981****, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝* ***<u>աճուրդի մասնակցության վճար</u>***՝ *պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը:* ***Մասնակցության վճարը գույքի (լոտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,***

- *իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման համարը, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ անձնագրի և սոցիալական քարտի համարը,*
- *հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը).*

* *Աճուրդի մասնակցության հայտը՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով ներկայացնելու դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս), որի տրամադրումը դադարեցվում է աճուրդը սկսելուց առնվազն երեսուն րոպե առաջ:*

Աճուրդի մասնակից չհամարվող անձինք և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝

- *Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981 հաշվեհամարին:*
- *Վճարումը հաստատող անդորրագիրը (նշելով վճարման նպատակը՝ դիտորդի տոմսի վճար) և անձնագիրի պատճեն ներկայացնել Կազմակերպչին՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ՝ ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):*
- *Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:*
- ***Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:***

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- *Աճուրդի մասնակիցների* ***անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի*** *առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև* ***լիազորությունները հաստատող փաստաթղթերը****:*
- *Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:*
- *Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:*
- *Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Յանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:*
- *Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:*
- *Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:*
- ***Աճուրդում գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափը չգերազանցելու դեպքում վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել մասնակցի վկայականը (տոմս) և վճարել իր առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարման միջոցներով), որը սահմանված ժամկետում հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է ՀՀ պետական բյուջե: Գնորդը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով:***
- *Վճարման դեպքում՝ աճուրդի հաղթողի առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարի գումարը հաշվարկվում է հաղթողի (գնորդի) կողմից վճարման ենթակա գումարի մեջ և աճուրդի Կազմակերպչի կողմից փոխանցվում համապատասխան հաշվին:*
- ***Եթե աճուրդը համարվում է չկայացած հաղթող մասնակցի կողմից վճարումները սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու պատճառով****, ապա այդ դեպքերում հաջորդ աճուրդը կազմակերպվում է նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման:* ***Տվյալ մասնակիցը հայտարարված գույքի նոր աճուրդին չի կարող մասնակցել****:*

* ***Աճուրդի Կազմակերպիչը նախավճարը, աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին՝ մասնակցության հայտում նշված հաշվետիրոջ հաշվեհամարին:***

** **Համաձայն Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2022թ. դեկտեմբերի 15-ի թիվ 347-Ա հրամանի՝***

- Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

- Առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով:

- Աճուրդում հաղթող ճանաչված անձն արձանագրությունն ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի (լոտերի) գինը:

- Գնորդը պարտավորվում է գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը վճարել գույքի գնի վճարման համար սահմանված ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական թիվ 1 բաժանմունք՝ 900018002981 հաշվեհամարին:

- Գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել տրանսպորտային միջոցի պետական հաշվառման հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գումարներն ու տուրքերը:

- Աճուրդի հաղթողի կողմից սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մուծված նախավճարը չի վերադարձվում, աճուրդը համարվում է չկայացած և լոտ (եր)-ը վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով:

** **Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10 կամ զանգահարել՝ 010**-52-63- 32 , 043-06-07-16 **հեռախոսահամարներով:***

Ծանուցում.

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լոտի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լոտի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:

Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:

3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 196 հոդված.

Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը, որը խոշոր վնաս է պատճառել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

**Ուշադրություն. աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է՝ դրա օրինականությունը ապահովելու նպատակով:*